



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերձագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել կյուրը ջանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա կյուրը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

մէ
Կ-55

համար 1958 թվականի հունիսի 15

5/2
23
148

ՍՍՏՌԻԳՎԱԾ Է 1958

Ս.Ռ.Ա.ՋԻՆ

ՄՐՄՈՒՆՁՔ

ՍՍՏՌԻԳՎԱԾ 1958

ՔԵՐԹՈՒԱԾՔ

Ա.ԲՐԱՀՍՄ Յ. ԱՅՎԱԶԵԱՆ



ՏՊԱԳՐԱՌԹԻՏՅԱՆ ԼՅՉ ԲԻԻԲԻՅԵՐՆ
ԿՈՄՏԱՆԴՆՈՒԳՈՒՄ, ՅՆՆԱԵՆՇԱՄ

БИБЛИОТЕКА

Г. А. АВАТЬЯНЦА

№ 4864



Ա. Ռ. Ա. ԶԻՆ

Մ Ր Մ ՈՒ Ն Զ Ք

1845

1845

891.574

U-53

ԱՌՍԱԶԻՆ

ՄՐՄՈՒՆԶՔ



ՔԵՐԹՈՒԱԾՔ

ԱՐՐԱՀԱՄ Յ. ԱՅՂԱԶԵԱՆ

Handwritten notes: 86, 15287, 44865

Faint purple stamp: Հ. Ա. ՄԱԿԱՆԻԱՆ



БИБЛИОТЕКА
Г. А. ХАЛАТЯНЦА
Գ. Ս. ՄԱԿԱՆԻԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Բ. Յ. ՔԻՒՐԲԶԵԱՆ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅԻՆՃԱՆՃԸԼԱՐ

= 1864 =

41176

~~6012~~

19

~~71199~~



ԱՌ. ՀԱՅՐՆ ԻՄ

ԱՌ ԳԱՅՐՆ ԻՄ

Դո՛ւ լուռ հանգչիս 'ի ծոց յիբնիդ,
Հա՛յր իմ՝ այլ սիրտ քու որդւոյդ՝
Բարախելով յիշատակաւդ,
Հսկե՛ անքուն մերձ հողոյդ:

Թո՛ղ մերկանայ իմին քընար,
Իր վարդապսակ զարդերէն.
Եւ պննուի իրեն հակատ,
Քու դամբանիդ նոներէն:

Հա՛յր իմ՝ տըխուր է իմ հոգիս,
Մուր իբբ ըզվիհըս մահուան . . .
Լոկ հառաջանք մըն են իմ երգք
Ո՛ն քաղցր առ քեզ սըլանան . . . :

ԱՌ. ԸՆԹԵՐՑՈՂՍ

Այն Աստուածային շունչը որ անգործ արեց փրայ շնչելով՝ ազդեց իրենց մշտնջենաւոր շարժումն եւ կեանք . . . որ մայրեաց մէջ խորհրդաւոր նուագներ կը յարուցանէ . ծովուն ամայի դաշտաց մէջ փրփրադէզ լեռներ կը զլորէ կեանք կուտայ ծաղկին՝ ցօղ կը դառնայ վարդին համար՝ եւ նուագ՝ Թռչնոց բերնին մէջ . այն Աստուածային շնչէն մարդս ոչ միայն զուրկ չէ , այլ նաեւ կրնանք ըսել Թէ այն իսկ է իր սրտին անունդը : Բնութեան տեսարանաց՝ կրից յուզման՝ հայրենեաց վշտերու նկատմունքը երբոր զմեզ հեշտական կամ սրտում ցնորից մէջ կընկղմէ , այն զաղտնի եւ երկնային զմայլումն ու մրմունչը որ 'ի մեզ կզգանք՝ ներդաշնակ խօսքերու փոխուելով ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻԻՆ կը կոչուի :

Այսպիսի վայրկեաններ ես ալ ունեցեր եմ , եւ իմ ցնորքներէս շատերն 'ի զիր աւանդեր եմ : Այսօր կը հրատարակեմ զանոնք . ի՛նչ դատասան ալ փրան ըլլուի , ինչպիսի աչքով նայի անոնց բննադատն , Ազգը մերժէ զանոնք կամ ներողամիտ սիրով ընդունի՝ միշտ շնորհակալութեամբ միայն պիտի կարենամ պատասխանել . — բայց մի միայն ըսելիքս աս պիտի ըլլայ՝ որ սրէս բղխած են , եւ իբրեւ աշխատանացս եւրասիայիքը կը նուիրեմ զանոնք սիրելի ազգայնոցս :

The first of the year was a very dry one, and the crops were much injured. The weather was very hot, and the ground was very hard. The crops were much injured, and the people were very poor. The first of the year was a very dry one, and the crops were much injured. The weather was very hot, and the ground was very hard. The crops were much injured, and the people were very poor.



ԱՌ ԱԶ Բ Ն

ԱՐ ԲՐ ԱՐ ԱՍ Ի Ն Զ ՎՐ



ՆԱԽԵՐԳԱՆԲ ՊԱՆԴԻՍԻՆ



Ի՛նչ քաղցր էին այն վայրկեաններ ,
Ուր Հայրենիք , փառք , յոյան եւ սէր՝
Կը ժպտէին աչքիս դիմաց ,
Ծաղկեայ պսակով գլուխնին պճնած :

Ի՛նչ քաղցր արցունք կը սահէին ,
Իմ աչքերէս զուարթագին .
Երբ դգուէի իմ խեղճ մայրիկ ,
Երբ տեսնէի իմ Հայրենիք

Ուրախ սրտով շրթունքս երգէր ,
Իմ Հայրենի անոյշ տաղեր . . .
Վարդափետուր Հայոց հրեշտակն՝
Գար դիւցազանց 'ի սեւ շիրմակն :

Յերկնից բերէր սիրուն ծաղիկ ,
Իմ Հայրենեաց թափէր 'ի դիրկ .
Եւ արտասուաց կաթիլք ջնջէր ,
Նոցա փոխան վարդք կը ձօնէր :

Յայնժամ փայլէր աստղիկն Հայկեան ,
Ծագէր յուսոյ եւ ծիածան .
Անդ Հայաստան նոր լոյս մ'առաւ ,
Թռամած շրթունքն 'ի ժպիտ դարձաւ :

Քայց երբոր սեւ բաղդին ձեռքերն՝
Ուզեց քաղել հողւոյս վարդեր .
Յերկրի փոխանք ինձ չը մընաց ,
Քայց յիշատակ իմ Հայրենեաց . . . :



ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀԱՅՈՒ ՄԸ

ՎԵՐՁԻՆ ԽՕՍԲԵՐԸ



Հեռի յախանցն Հայրենի ,
Ինկած 'ի հող օտարի .

Գիշերն լուսինն չէր ժպտեր ,
Յերեկն Արեւ՝ ինձ մուխ էր :

Ընտանիքէս մերթ լուրեր ,
Ողջութեան ձայն կը հնչէր .
Սակայն սիրոյն ժամերնէն ,
Աչերս կարօտ կը քաշեն :

Անոնք իմ բաղդս կուլային ,
Ես ալ անոնց վշտագին .
Քուն չ'ունէի գիշերներ .
Սիրտս երբէք հանգիստ չ'էր :

Բարեկամի մը ձեռքեր՝
Չ'եղաւ , արցունքս՝ որ սրբէր .
Ոչ ոք աւանդ կը գլխար ,
Սրախ խոցեր երբ տեսնար :

Թախառական օրն 'ի բուն ,
Շրջէի 'մէջ գաշտերուն .

Եւ ծաղիկներ ժողովելով,
Կը դառնայի խոց սրտով :

Մինչ մանկիկներ ժպտէին,
Իրենց մօր ծոց զուարթագին .
Ես Հայրենիք երգէի,
'Ի նախնեացս փառքեր յիշէի :

Երբ շողային աստեղց պարք ,
Յերկնից կամար կապուտակ .
Ո՛հ ինչ արցունք սահէին ,
Յաչաց թշուառ պանդխտին :

Այսպէս օրերս անցնէի ,
Եւ լոկ ասով սփոփէի՝
« Որ երկընքէն կը լսեն ,
Պանդուխտ սրտերն որ հեծեն » :

Թէ դեռարոյս պատանի ,
Ճամբուն վըրայ տեսնայի .
Երբէք ողջոյն չ'էին տար ,
Կ'ըսէին այս է օտար :

Սակայն հասաւ այն վայրկեանն ,
Յորում արցունքս ան չորնան .
Եւ ողջոյն տամ հրաժեշտի ,
Այս դառնաղէտ աշխարհի :

Հաղիւ ծլած կը թռումիմ,
Վերջին անգամ պըսակուիմ.
Մտերմական արցունքով,
Ողբանուագ երգերով :

Ո՛հ գերեզման կը հասնիմ,
Կարօտս չ'առած կը մեռնիմ .
Տունն՝ Հայրենիք . . . ամեն բան՝
Ո՛հ կ'ընկղմին 'ի դամբան :

Հայրենիք . . . Ձեզ ողջունեմ . . .
Սիրուն դաշտերդ համբուրեմ .
Սրտիս ուխտերն ընդունէ ,
Զոր արտասուօք քեզ ձօնէ :

Շիրմիս վըրայ թո՛ղ ալ դան՝
Իմ ընկերներս . . . բայց չըլան . . .
Եւ գգուելով սեւ հողերն .
Վըրան սփռեն ծաղիկներ :

Զի գուարթունք երկրնքէն ,
Զիս իրենց քով հրաւիրեն .
Երկրէս սլանայ իմ սրտիկ ,
Ողջամբ մնացէք . . . Հայրենիք . . .





Երկնային ծաղիկ ,
 Մինչ նշոյլդ սփռես .
 Քու լուսովդ գողտրիկ ,
 Մեր սիրտք կը վառես :

Շողերդ սիրուն ,
 Երբոր կը կաթին .
 Ո՛հ սեւ շիրմերուն ,
 Վարդեր կը ծլին :

Սիրոյ դըրախաներ ,
 Դու լուսաւորես .
 Երկնից հրեշտակներ ,
 Գունդիդ մէջ սլահես :

Անտառաց ողիք ,
 Քեւ ցնձան , հրճուին .
 Եւ դաշտաց ծաղիկք ,
 Քու սիրոյդ բացուին :

Մինչ կը դեզերիմ ,
 Ես սլանդուխտ յԱշխարհ .
 Քու դիրկըդ հանգչիմ ,
 Հոգւով վշտահար :



Ո՛ր մահականացու այս երկրիս վըրայ ,
 Երջանիկ ժամեր վայելել կրնայ .
 Եւ որն է այն վարդ՝ ծլած յաշխարհի ,
 Որ ձեռացըդ մէջ խսկոյն չըթումի :

Թէ մըտօք դրկեա զերկիր եւ զերկին ,
 Եւ ամեն գաղանիք քեզ մերկանային .
 Անհընար է քեզ ըլլալ երջանիկ ,
 Այլ դժխեմ բաղդին թշուառ խաղալիք =

Իզնուր դիւցազունք պատերազմական՝
 Դաշտերուն վըրայ կանգնեցին նըշան .
 Հաղիւ ըստացան յաղթութեան պըսակ ,
 Կորդեց ձեռքերնէն զայն մահուն հրեշտակ :

Չեն , չեն երջանիկ ,
 Ո՛չ ժամք սիրանուէր .
 Որ գդուէ հողմիկ ,
 Ըզկուսին մազեր :

Ո՛հ չէք երջանիկ ,
 Ո՛վ դժբաղդ Հայեր .
 Մինչդեռ Հայրենիք ,
 Չէք մըխիթարեր :



Սեւ բաղդն արդեօք նախանձեցան ,
 Խմ գրկերէս հեռու տարաւ .

Եւ թողուց խեղճս անմըխիթար ,
 Ձիս զրկելով քեզմէ ո՛վ մայր :

Յօղըն վարդին թերթից վըրայ ,
 Զուարթ դիմօք կը շողշողայ . . .

Մօրս այտերէն կը վազէին՝
 Ո՛հ ի՛նչ անոյշ արցունք աչքին :

Քայց այժմ ինչո՞ւ զրկուեցայ ,
 Մօր մը համբոյրք , ո՛հ ալ չը կայ . . .
 Զնւրի այն սիրուն շրթունքներէն ,
 Որ մայրական գորով շնչեն :

Ո՛հ յիշէ մայրս գորովագութ ,
 Գըրախտին մէջ երկնից կապոյտ .
 Իւր միայնիկ թշուառ որդեակն ,
 Որ կը գգուէր իբր աղաւնեակ :

Քաղցրահամբոյր սիրուն հողմիկ ,
 Անոյշ թեւօք իւր խաղաղիկ .

Աւ չը գդուէ դլխիս մազեր . . .
Զի թոռմեցաւ ճակատիս յոյսեր :

Փռփկալեզու սիրոյ թռչնիկք ,
Թո՛ղ այժմ ողբան թշուառ մանկիկս .
Տըխուր քնարէն քաղնն երգեր ,
Հնչեցընեն թո՛ղ իմ վայրեր :

Քաղրակարկաչ այն վըտակներ ,
Որ յիշեցնեն ուրախ օրեր .
Չեն ինձ երբէք , ո՛ն սփոփանք ,
Մինչ կան հեռի մօրս գորովանք :

Քաղցրիկ օրաին մեղմ նըւազներն՝
Երբ կը յիշեմ . . . ցօղնն աչերս . . .
Եւ իւր գգուանքը յաւխտեան ,
Պիտի մընայ մինչ իմ դամբան . . . :

Աչքէս սահած դառն արցունքներ ,
Ո՛ն դէթ շիրմի մը վրայ կաթէր . . .
Եւ հառաչանքն իմ բոցազին ,
Ո՛ն անօր հետ խառնըւէին . . .





Ի՞նչ տխուր ժամեր, մինչդեռ մանկալին՝
Արեւուն լուսոյն բանան աչքերնին,
Մայրեաց երաժիշտք ճոռուղեն ուրախ,
Այլ աւանդ իրենք սրտերնէն տան անխ :

Երբոր նոր բացուած ծաղիկներ տեսնեն՝
Հայրենի վտակս՝ կը յիշեցընեն .
Որուն խոխոչանք՝ մանկական երգեր,
Կրկնելով իրենց ախռէլն վարդեր :

Ո՞հ մայրիկն արդեօ՞ք սեւ շիրմին վըրաց,
Արին արցունքով կոթնած կուլայ .
Երբ օտարութեան պաղ հողմեր շնչեն,
Միթէ հառանչներ կը բղխին սրտէն :

Ե՛րբ տեսնէ աստղունք՝ գիշերէ գիշեր,
Աչքերէն թափի դառըն կաթիլներ .
Յիշելով զորդին՝ թէ ուր տեղ հանգչի,
Արդեօ՞ք հողերո՞ւ, թէ ապառաժի :

Ո՛վ Հայ մանկալի՝ այսպէս դու թափառ,
Օրերդ կանցընես, երկնից տակ օտար .
Մինչեւ որ Երկինք ՔՈՒ վըրադ գթան,
Մըթին նոճեաց տակ պատրաստեն դամբան :

ՅՈՅՍ ԵՒ ՍԷՐ

Զերթ անմեղ տատրակ ,
Թռչին երկրն քէն .
Մահացուաց հոգեակ ,
Ի խանդ բորբոքեն :

Զոյգ այս հրեշտակներ ,
Քաղցրիկ ժրպխտով .
Ողիք եւ սրտեր ,
Գգուեն յոյսերով :

Զեռք ձեռքի տուած ,
Մինն ձօնէ ծաղիկ .
Մոռնալ տայ անցածն ,
Երգէ Հայրենիք :

Իսկ միւսն նրւագէ ,
Երկնային տաղեր .
Եւ պսակներ հիւսէ ,
Գլխոց լուսահեր :

Այս երկու Աստղիկ ,
Փայլին մշտարժարժ .
Ի չիրիմս լռիկ ,
Ուր ազգք են հանգչած :



Իջաւ զըւարթունն Երկնից հրաւիրակ ,
 Իւր ձեռքը բռնած զՄնամահից սլոսակ .
 Խնդրելով հոգիդ Քու անմեղական ,
 Տանիլ արդարոց Երկնային խորան :

Կարծես թէ լուսինն՝ իւր դէմքըն ծածկէր ,
 Գողգոջուն աստղունք ալ չէին ժպտէր .
 Իմ աչքերս ալ դառն արտասուօք լեցուած ,
 Սեւ շիրմիդ վըրայ տխում փունջ ծաղկանց :

Գարնան վարդենիքդ հաղիւ դեռ ծըլած ,
 Անգութ գերանդոյն կը տեսնեմ մատնած .
 Ո՛ղ հրեշտակ ինչո՞ւ այսչափ վաղ սլացար ,
 Համակեալ զմեզ 'ի սուգ անսպառ :

Վայ թառամեցաւ Քու ծաղիլ հասակդ ,
 Յուքտ քարին վըրայ , Քո դափնեայ սլոսակդ՝
 Մահուան դառնաշունչ հողմէն մթնցած ,
 Գարձաւ 'ի նոճի մութ գերեզմանաց :

Բիւրակնեան Մուտայք աչօք ցողաթուրմ՝
 Սեւասքօղ՝ քնարէն քաղեն երգ արխուր .
 Սուգ ըզգեհուն մայրք , սուգ՝ լերինք , դաշ-

Ձի անմեղ տատրակ մը սլացաւ յեթեր :

Հոյլ 'ի հոյլ դուարթունք Աստեղաց մէջէն ,
 Ըզ մատաղ հողեակն 'ի վեր հրաւիրեն .

Հայկազանց դրախտէն սպակախ մէկ ծաղիկ ,
 Եւ յերկնից կամար փայլէ նոր Աստղիկ :



ԵՐԳ

ՊԱՆԴԻՏԻՆ



Հայաստանի քաղցրիկ օրեր ,
 Յիշեցընեն ինձ թռչնիկք .
 Մինչդեռ իրենք ուրախ ժպտով ,
 Հնչեն սիրոյ դայլայլիկք :

Ի՛նչ քաղցր պանդխտին ,
 Պատկեր Հայրենեաց .
 Բերել ամեն ժամ ,
 Առաջի աչաց :

Ո՛հ ինչ տըխուր էր այն վայրկեան,
Երբ մեր երկրէն հեռացանք .
Եւ ինչ մութ էր այն երկինքներ,
Երբ մեր Աստղէն զատուեցանք :

Նոր ծլած վարդեր,
Հազիւ քաղէինք .
Ժանտ պանդխտութեան,
Հրաւէր կարդացինք :

Ո՛հ Հայաստան . . . իմ Հայրենիք . . .
Դու գերեզման վարդանանց .
Արդեօ՛ք պիտի տեսնեմք քեզի,
Օր մը դափնեօք պըսակուած :

Հո՛ն դամ համբուրել,
Այն սուրբ շիրիմներ .
Որ անխախտ մընայ,
Բիւրաւոր դարեր :



ՀՐԱԺԵՇՏ

ՔԱԶԱՍԻՐՏ ԶԻՆՈՒՈՐԻՆ

Մեր Հայրենեաց փափուկ հողեր ,
Արեան գետակ են դարձուցեր .
Եւ այն դաշտերն Աղատութեան ,
Թշնամեաց սուրբ կը շողշողան :

Բռնաւորին սեւ թեւոց տակ ,
Քանի դարեր հեծենք թշուառք .
Արիւն արցունք գիշերն ամեն ,
Հերիք իջան մեր աչքերէն :

Քաշած աղէտքս ալ կը բաւեն ,
Վրէժխնդրութեան հրաւէրք հնչեն .
Ալ չեմ կրնար շղթայից տակ ,
Գերի տեսնալ իմ քորքն ու եղբարք :

Այսօր ինձի թող օր մ'ըլլայ ,
Յաղթանակի եւ կամ մահուան
Իերի մնալէն քաղցր է ինձ սէ ,
Հանդիչիլ փառօք նախնեացս ի հող :

Զի որն արդեօք իմ հայրերէն՝
Հանդիատ մահուամբ լուռ ննջած են .

Այլ պատերազմ եւ յաղթանակ ,
Միշտ թողուցին մեզ յիշատակ ։

Օհն խաչանիշ դրօշովս փութամ ,
Հայրենավրէժ 'ի պատերազմ .
Վատ ազգերուն դահն կործանեմ ,
Եւ յաղթական նըւազս երգեմ ։

Զի խրախուսեն իմ Հարց ստուերք ,
Ազգիս շղթայք ալ խորտակել .
Իմ Հայրենեաց քաղցր ապագան՝
Սրտիս կուտայ ոյժ քաջութեան ։

Այո , հոն տեղ մահն ինձ քաղցր է ,
Ազատութեան երբ փողն հնչէ .
Հոն զոհուեցան շատ մեծ քաջեր ,
Պարզել յեթերս աղատ դրօշներ ։

Հոն թշնամւոյն արիւններով ,
Գիականց վրայ անջինջ գրով
Իմ Հայրենի փառքըն դրօշմեմ ,
Եւ իմ ճակատս անոնց ցուցնեմ ։

Բայց Աստուծմէ այս կը խնդրեմ ,
Որ օր մ'ուրախ սրտով տեսնեմ .
Ազատութեան յաղթանակով ,
Վերագարձն իմ սուրբ Հարցրս քով ։

Ի ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ



Հայուն աչքէն ալ չը հոսէ դառն արցունք
Հերիք լացաւ, հերիք հեծեց իւր բաղդին,
Հայն իւր վշտերըն մոռցած տայ ընկերին՝
Սիրոյ համբոյր, սիրոյ ժըպիտ եւ ծաղկունք:

Նոյեան աղանին,
Զիթենեաց ճիւղեր,
Սփռելով դետին,
ՀԱՇՏՈՒԹԻՒՆ բերէր:

Ահա եւ այսօր ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ,
Իբրեւ աղանին բերաւ Հաշտութիւն:

Ոսկի թելերըն թող հնչէ Հայ քընար,
Որոց ննջեն ընդ հովանեաւ սուրբ շիրմաց,
Համբոյր սիրոյ դրօշմեն յերեսս իրերաց,
Խաղաղութեան ձայնիւ թնդայ թող աշխարհ:

Զայն տուք դիւցազանց,
Որ յԱրտազ ննջեն . . .
Աստեղք Հայկազանց,
Նորալոյս փայլեն:

Աղէ սիրտ սրտի խառնէ միութիւն,
Զի յաւերժացի ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ:



Սիրուն դեղձանիկ ,
Ո՛ւր այսպէս թեւես .

Երգակդ անուշիկ ,
Ժպտելով կ'երգես :

Անթառամ ծաղկանց ,
Կ'ըլլաս այցելու .

Եւ կարծես անանց ,
Հոս տաս վարդերու :

Հրեշտակ սիրասուն ,
Քու ձայնդ անուշակ .

Իմ դառն օրերուն ,
Է քաղցր սփոփանք :

Մինչ թեթեւ թեւօք ,
Կ'սղանաս յերկին .

Ո՛հ ի՛նչ անձկանօք ,
Աչքըս քեզ յառին :

Այն քաղցր նուազացդ ,
Փափուկ թեւերովն .

Հողիս անձկայրեաց ,
Թռչի դուարթնոց քով :



Որտալնդոսա Երկինք թափեն կայծակներ ,
 Եւ մրրկաց ոգիք թեւօք հըրեղէն :

Կ'խորտակեն Տարտարոսին սեւ դռներ ,
 Եւ զՏիեզերս խոր 'ի հիմանց կ'զղրդեն :

Մահահրաւէր սպառնալիք սեւ բաղդին ,
 Երկնից մէջէն աւանդ մեզի կ'լսուին :

Գողայ երկիր , դողան մեր սիրտք տխրազ-
 գեաց ,

Նաւուն կողեր ալեծըփեալ կ'ճռնչեն :

Այս ահագին մեծ ժայռերուն մատնուած ,

Արտասուալից՝ յերկնից թիկունք կ'խնդրեն :

Ո՛հ Երկինք ալ լուսնոյնչոյլք չ'արձակեն ,
 Եւ երկիրն ալ սեւ ամպերով պատեր են :

Ալիք կատաղի ,

Ափանց դէմ փշրի :

Մռընչեն հողմեր ,

Գոռան մրրիկներ :

Ո՛վ Տէր , այս քանի արցունք հոսեցին՝

Արցունք մեր աչեր՝ լալով վշտագին :

Ահագին մունչիւնք երկնագործ մրրկին,
Յրուեն մեր մաղթանքն 'ի մէջ Նթերին :

Ձեզ բարեկամք, ո՛հ կ'խրկեմ զողջոյն իմ,
Յիշեցէք զիս . . . Տարակ կ'ըլլամ սեւ
ձուլին :

Ահա մեծ ալիք՝
Մեզ կուգան մայրիկ .

Ո՛հ երկինք հասնի,
Ազատել մեզի :

Իւր սոսկալի դէմք,
Ահա կ'տեսնեմք .

Որ բանայ գամբան,
Մեզի յաւիտեան :



ՀԱՌԱՉԱՆՔ ՊԱՆԴԻՏԻՆ
ԱՌ ԾԻԾԵՌՆԻԿ



Օտար երկրի մութ բանտերու խորերէն,
Թափառական Հայու ողբեր կ'հնչեն .

Փափուկ ոտքեր՝ սլինդ շղթայիւք կապ-
ուած է,
Աչերն արցունք՝ իւր անձկալին կ'գոչէ :

« Իմ Հայրենեաց Միծառն՝ սն ձայնդ ինձ
սիրուն,
Դու մխիթար, խոցուած սրտիս վէրքե-
րուն .
Գընան, թռիր, Հայկեան դաշտեր հեռացիր,
Չայն տուր Հայոց, սն իմ քաջաց սիրալիր՝
Ըսէ անոնց . որ ընկերնուն կարեկցին,
Որ խաղալիք եղաւ անդու թ կոյր բաղդին,
Բաղդն անողորմ չը գթալով վիճակիս,
Կ'ուզէ խամբել գարնան ծաղիկ իմ յայս տիս .
Ո՛հ թշուառիս ժամն՝ է տարի, օրն՝ է դար,
Կուգան, կ'երթան, կրկնեն ցաւերս ան-
գաղար .
Երբ կ'յիշեմ իմ Հայրենի հին փառքեր,
Սրտիս խորը նոր նորոզի իմ վէրքեր .
Երբ նայուած քներս այս մարգերուն դար-
ձընեմ,
Արտասուած ուրմ՝ իմ Հայրենիքս կ'յիշեմ .
Երբ տեսանեմ ծաղկափրթիթ մարմանդներ,
Սրտիս մէջէն սլանան եւ բիւր հառաչներ .
Ո՛հ Միծեռնիկ կրկին դարձիդ երգելով՝
Իմ մանկական ազատ երկրիս տաղերով .

Վարդից թերթիւք՝ բանտիս ճակատ դար-
 դարէ ,
 Քաղցրիկ երգով , սիրոյ ողջոյն նըւագէ :

Ա՛հ իմ դիմաց՝ ծաղիկք բացին սոյն հովիտք ,
 Արդեօք բացին Հայաստանի սուրբ լերինք .
 Պանդուխտ սրտիկս մինչ երբ հեծէ լալագին ,
 Մինչ երբ շնչէ օտար զեփիւռ ցրտագին :

Ե՞րբ դայ արդեօք այն արեգակն իմ երկրի ,
 Ո՛ւր կարենամ ազատ թռչիլ զերդ քեզի .
 Ո՛հ , անդ թառիլ , սիրոյ բունիկս Հայ-
 կական ,
 Ո՛ւր կապեցին խանձարուրիկս մանկական :

Ո՛հ , ինչ կ'ըսեմ . . . թերեւս դարձիդ՝
 սեւ դամբանն՝
 Գլխիկս դընէ , մութ նոճեաց տակ յօրօ-
 րան . . .

Երգէ դու հոն , քու սիրալի դայլայիկդ ,
 Թերեւս ձայնիդ արձագանդ տայ աճիւ-
 նիկս . . . » :



— 81 —
ԵՐԳ

ՄԻՈՒԹԵԱՆ



Օ՛ն Հայկազունք , սիրոյ շրթամբք լու-
ծենք քաղցրիկ նըւագներ ,
Հոգեատչոր դողորիկ համբոյրս դրօշմենք
միմեանց ճակատներ .

Հըրաւէր կարդանք սրտից Հայկազանց ,
Եւ ծաղկամբք սլճնենք դամբանք Հայ-
րենեաց .

Չեռք ձեռքի տուած երգենք Հայրենիք ,
Սիրա սրտի յօղած դիմենք մեր մօր գիրկ :

Յըրիայ յԵրկինս լարն եօթներփեան ,
Դրօշ լուսատարր Հայ հաշտութեան .
Խրախոյս կարդան սուրբ Հարց ա-
ճիւնք ,
Հերիք 'կ'ըսեն ալ մեզ արցունք :

Անմահ Յոյսն եւ Սէր ,
Չերթ զոյգ հրեշտակներ .
Ահա բանան մեզ ,
Փառաց ասպարէզ :

Հայաստանեայց սրբանշուէր քաղցրիկ ողին
մեզ ժպտի ,
Եւ Հայրենի շիրմաց մէջէն՝ մեզի հրաւէր
կ'լսուի .

Ահն Աստուածեան՝ հաշտ ողւով կ'ղխտէ ,
Երբ Հայկեան զուարթուն յոյս եւ սէր
կ'երգէ .

Պաղպաջուն աստղուն ք յԵրկնից կամա-
րէն ,
Դափնեայ պըտակներ յերկիր կ'սփռեն .

Դայ Աղաւնեակն սիրուն ոստով ,
Մեզ՝ ինդութիւն աւետելով .
Ո՛վ Հայութեան արիւն կրէ ,
Քաջաց անշուշտ նա որդի է :

Օ՞ն յառաջ մատիք ,
Հայութեան ողիք .
Մինչ աստղիկք Հայկեան ,
Սիրարժարժ խայտան .



Ահա ժպտի նոր Գարուն ,
Պճնած ծաղկէ պըսակով .

Ողջոյն կուտայ որտերուն ,
Ողջոյն հովտաց զեփիւսով :

Մինչդեռ լուսին շողալով ,
Միրոյ ժամեր կ'ընծայէ .

Առուակք 'ւ վտակք գղչելով ,
Ծաղիկք , խոտեր կ'ըրեն :

Սառնամանիք ձըմերան ,
Հողմըն ցրուեց փըքարեր .
Ախորժ սլանայ սիւղ դարնան ,
Բուրմուսս սիռեն ընդ այեր :

Ծաղկահամբոյր եւ հովիկ ,
Ողջոյն տալով մեր երկրին .
Բացուի ծաղկանց հեռ սրտիկ ,
Նորողի յոյն Հայ դաւկին :

Սաղարթախիա ծառերուն ,
Տերեւալից ոսախն պէս .
Կանանչանայ Հայրթիւն ,
Բիւր փնսք հանկնք որտերնէս :

Հոս կ'աշխատի մըջունիկ ,
Մեղըր շինէ ժիր մեղուն .
Հնչեն սիրոյ դայլայլիկք ,
Արձագանք տան ձորերուն :

Աղէ որդիք Հայկազնեան ,
Ուրախ , գըւարթ սիրտ պարզենք .
Օրհնել ըզ Տէրն բընութեան ,
Մեր սիրան Անոր ընծայենք :

Չայն տանք առ Տէրն եւ ուխտենք ,
Ըլլալ մէկ սիրտ միաբան .
Եւ դարնան հետ նորոգենք ,
Մեր ջանքն ու սէր Հայկական :

ԵՐԳ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հովիտ ծածկեալ 'ի ծոց լերանց ,
Գողարիկ պատկեր իմ Հայրենեաց .
Երրորդ անգամ սիրոյ նըւագ ,
Քեզ դայ ձօնել Հայ պատանեակ :

Օ՛ն երգեցէք Հայկեան զուարթունք ,
Սիրոյ է ժամա , դադրին արցունք :

Հրեշտակն Հայոց յերկնից սլանայ ,
Նայուածքներէն ժրպիտ շողայ .
Եւ այն ժպտէն վերականգնին ,
Համբ աւերակք Հայաստանին :

Հայկեան կուսանք օ՛ն փութացէք ,
Նորածին վարդըս փռեցէք :

Փայլուն աստղեր ահա շողան ,
Իբր հաշտութեան երկնից նըշան .
Հայկեան փառաց՝ նոր վարդարել ,
Հայկեան քընար՝ նոր երգք տաւղել :

Հայ պատանիք օ՛ն ձայնեցէք ,
Գողտրիկ ձայնով ՕՐՍ օրհնեցէք ,

Ո՛հ Հայրենիք ալ թող չըլան ,
Մասեաց սարեք արձագանք տան՝
Առ Եփրատէս՝ Տիգրիս գետեր ,
Ո՛ւր կան թաղուած քաջաց ոսկերք :

Հայ ծերունիք վիշտք ձեր մոռցէք ,
Մանկանցդ ճակատէն ըղճոյս տեսէք :



Մինչդեռ գիշերոյ խաղաղ թաղուհին,
 Յարծաթեայ կառացն ժպտէր զուարթազին.
 Ի բարձանց Երկնից սիրոյ հրեշտակներ,
 Մեզ կ'ախօէին դավնեայ պըսակներ:

Բանդառունքն երգէին զվեհն Աղատութիւն,
 Որ մեզի բերէր փրկութեան ողջոյն.

Պճնէին ծաղկամբք դամբանքն լըռին,
 Ո՛ւր Հայ դիւցազանց ոսկերքն հանդէին:

Երկընքէն ժմաին պաղպաջուն աստղեր,
 Երբ կը ծածանին Հայոց դրօշակներ.

Աղատ Մասիսի լեռանց ծայրերէն,
 Հայրենահրաւէր ձայներ կ'հնչեն:

Գըժոխոց դռներըն խորտակելով,

Վարդան եւ Մեսրոպայ 'ի վեր վազելով
 Կանգնեն յաղթանակ պերճ Աղատութեան,
 Վերանորոգեն փառքեր Հայութեան:

Ո՛հ ինչպէս հրճուին Հայոց դաւակներ,

Մինչդեռ կ'անսնեն նախնեայ հին փառքեր,
 Լուռ կրնան մընալ մեր սիրուն քընար,

Մինչդեռ Աստղն Հայկայ շողայ լուսավառ:

ՅՈՒՍԱՀԱՏԻ ՄԸ

ՎԵՐՋԻՆ ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐԸ



Ո՛հ, ի՛նչ վայրկեան՝ կարծես երկիր սեւադէմ,
 Ինձ կ'երեւայ, միայն հանդիստ գերեզման.
 Երկինք՝ իրեն աստղներէն որբացած,
 Տժգոյն լուսինն՝ ամպերուն մէջ մուրաժ:

Ծովուց եղերք թափառեցայ տխրագին,
 Մինչ փոթորիկ փշրէր զալիս դէմ ժայռին.
 Շանթից թեւերն՝ խնդրէր ոգիս աղեկէզ,
 Որ փշրի հեռն յՆրկնից անհուն ասպարէզ,
 Հրեղէն շնչով հեղձնուն զոգիս հառաչանքս,
 Ի զուր խնդրեմ ամեն ուրեք ըստփոխանք.
 Ըսի « ով Սէր քեզ միանգամ տեսնէի,
 Եւ քո ճակտէզ յուսոյ ծաղիկ կորդէի »:

Մինչդեռ թռչնիկք ինձ ցաւակից լինէին,
 Կարծես սրտիկըս 'ի կըրծից քաղէին.
 Գարնան ծաղիկս դառն արցունքով կ'ո-
 ռոգուէր,
 Եւ Տիեզերք ինձ գերեզման կը թըւէր:

Անոյշ հողմեր կ'զգուէին թեւերովն,
 Յուսահատիս տըխուր երեսք շոյելով:

Ո՛ւր շողային առաւօտեան ցօղիկներ ,
Զոր երկնից Տէր թշուառներու ընծայէր :
Թոռմեցաւ նհ զըւարթ ժըպիտ մանկութեան,
Հոգւոյս խորանք աւերակներ նհ դարձան .
Ըսի & Տէր իմ խրկէ յերկնուսա ինձ միայն ,
Խրկէ՛ հրեշտակդ , ո՛չ թէ սիրոյ , այլ մահ-
ուան » :

ԵՐԳ

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Ողջն ընդ քեզ Հայաստան ,
Մեր գիւցաղանց գերեզման .
Ողջն Հայոց թագուհի ,
Պսակեալ փառօք հայրենի :

Երկինք խրկէ Քեզ հրեշտակ ,
Բիւր փարդք ծըլին ոտքին տակ .
Իւք մէկ նայուածքն երկնագեղ ,
Քու արտասուացդ ըլլան գեղ :

Ո՛հ ինչ անոյշ նըւագներ ,
Պիտի հնչեն սոխակներդ .

Երբ քու ճակատըդ պսակէ ,
Ծաղկէճնեան դափնիէ :

Մանուկն յորոց կ'խայտայ ,
Եւ ծերունւոյն սիրտ ցնծայ .
Երբոր նշոյլք կ'ժպտին ,
Հայ աստեղաց նորածին :

Ո՛հ շիրմացդ քով ալ հանդչի ,
Անմահութեան վեհ ողի .
Մինչ զըւարթունք 'ի բարձանց ,
Պըսակս սիռեն Հայկազանց :

Փափուկ մատունքդ թող դրօշմեն ,
Այն տառերով ոսկեղէն .
Մեր սրտին մէջ « ՍԵՐ ԵՆ ԼՈՅՍ » ,
Մեր հոգւոյն մէջ « ԿԵԱՆՔ ԵՆ ՅՈՅՍ » :

Քու վըշտերուդ փոխանակ ,
Երկինք կանգնեց յաղթանակ .
Քու վէրքերով ալ դարման ,
Քեզի ՕՐԷՆՔ շնորհեցան :



Մինչ ապշեալ լռենք,
Տիեզերք համայն .
Թող երգերդ հնչեն,
Երաժիշտ բնութեան :

Ժըպիտորդ քաղցրիկ,
Երկնից աստեղրուն .
Կուտայ աշխուժիկ,
Շողալ վառվառն :

Դաշտեր կը թռչիս,
Հոն երգել մեղժիկ .
Ո՛ւր ինձի թըլի,
Սիրոյ դայլայլիկ :

Երկընքի ծաղիկ,
Նայուած քէդ բացուին .
Երկրիս վարդենիք,
Քեզմով կը ժմաին :

Ո՛վ չքնաղ սոխակ,
Օ՛ն եկ աստ հանդէ .
Մինչ մահուն հրեշտակ,
Իմ հողիս քաղէ :

ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ



Գողթան քընար թո՛ղ յարդարի ,
 Հնչել անոյշ նըւագներ :

Ի պերճ անուն խրիմեանի ,
 Թո՛ղ թըրթըռան իւր թելեր :

Ճակարիդ վըրայ Տէր կ'ժըպտի ,
 Հայկեան յուսոյ ծիածան :

Եւ սրտիդ մէջը կ'արծարծի ,
 Երկնային սէրն Հայկական :

Մինչդեռ իջար այս ասպարէզ ,
 Ամեն սիրտք քեզ ողջունեն :

Եւ երկնայինք ժպտելով Քեզ ,
 Դափնի պըսակ պատրաստեն :

Քու համբոյրներդ նհ կ'սրբեն ,
 Հայաստանի արցունքներ :

Միրուն ժպիտքըդ փարատեն ,
 Տըղիտութեան ստուերներ :

Քու երախտեացդ փոխարէն ,
 Այս հառաչանքս ընդունէ :

Որ իբրեւ ուխտ՝ մեր չըթունքէն ,
 Յերկնից կամար կ'թեւէ :



Երթամ մայրիկ հոն ծրծելու այն օղեր ,
 Ո՛ւր տեղ սընան առիւծանման Վարդաններ .
 Ձի հայրենեաց սուրբ սէր վառէ գիւմ հողի ,
 Հայրենիք . . . քաղցր անուն 'ի սիրտ պան-
 դրխտի . . . :

Հոն պէտք է ինձ երթալ տեսնել իմ փառքեր ,
 Որով երբեմըն Հայաստան կ'պարծէր .
 Այլ արտասուօք ուռին աչկունքդ ո՛վ իմ
 մայր . . .

Աւանդ որդւոյդ , ալ խընայէ , ալ մի լար . . . :

— Գընա սիրուն որդեակս , գընա այն դաշտեր ,
 Տես Հայրենեացդ պըսակ ինչպէս կ'փայլէր .
 Քուկին շրթամբքդ ան հողերն ես ալ
 պաղնեմ . . .

Բայց թո՛ղ ինձ ո՛ն որ մօր մ'արցունքը
 թափեմ . . . :

— Լուռ եւ արտումն իւր միաժին եդ 'ի նաւ ,
 Որ ծովահերձ իւր աչքերէն մեկնեցաւ . . .

Գիշերն ՚ի բունն նա խաչելուոյն պլլուած ,
Պաշտպան խնդրէ նշգեհ որդւոյն իւր զԱստուած :

Այսպէս երկար սպասելով անհամբեր ,
Ո՛հ տըղեկին համար աչքէն ցօղ կաթէր .
Երբոր շէր դար լուր մը անգամ այն տեղէն ,
Ելաւ , գընաց խնդրել անգութ ծովերէն :

Ծովուց եղերք կ'իտախառի անպաշտպան ,
Իւրնայուած քներ՝ Երկնից կամար՝ Լյճվկեան՝
Գարձընելով , արասուալից խոր սրտէն ,
Այս հառաչանք աղեխորով կ'ըզխեն :

«Ո՛ւր ես արդեօք սիրուն որդեակս Միհրանիկ
Հերիք խոցես քու ծընողացդ հէք սրտիկ .
Ո՛հ զիս ինչո՞ւ անմըխիթար թողուցիր ,
Գէթ մայրական արցունքներուս զըթացիր :

Գարձիր որդեակ , դարձիր յօրօր մանկու-
թեան ,

Ո՛ւր ծըծեցիր անոյշ կաթեր մայրական .
Մի ուշանար , չը դիմանար ալ մայրիկդ ,
Եկուր սիրուն այտէդ առնեմ համբուրիկ :

Ո՛ր լեռներու վըրայ արդեօք թախառիս ,
Ո՛հ այն մարմանդք յիշեցընեն քեզի զիս .

Ո՞ր դաշտն է այն՝ որ կ'լսէ երգերուդ՝
Եւ ո՞ր զեփիւռք գգուեն ըզհերըս գլխոյդ :

Ո՛հ Աստուած իմ, երկինքներու իշխեցող,
Տես աչերէս հոսէ լալեաց դառըն ցօղ .
Գըթան ո՛վ Տէր, միակ ծաղկիս անթառամ,
Չը թարշամին մօր մը յոյսեր անխորնամ :

Տէր իմ, երկնից աստղերուն մէջ ո՛հ տեսնը,
Խայտակն աչքով՝ պատանեկիկ որ սլանար .
Գալ գէպ 'ի քեզ՝ առնել պրսակ մրտենի,
Որ Դուն տայիր մեր քաղցր երկրին Հայրենի :

Ըսէ ինձ Տէր, որդեակս արդեօք որս լինի,
Ուլկիանու ալիքներուն կատաղի . . .

Դո՛ւք խօսեցէք . ծովուն անդութ ալիքներ ,
Ո՞ր եզերաց վըրայ արդեօք էք նետեր :

Խոր լըռութիւն մը կ'պատէ այս ժամեր,
Երբ կ'խնդրեմ իմին ծաղկիս մեղմ հոտեր .
Աւանդ . . . չըլլայ արդեօք անդութ ծովուն

կուլ ,
Քանդի ասոնք իմ խօսքերուս եղան խուլ :

Դո՛ւք ըսէք ինձ Արեւելեան պաղ քամիք ,
Ո՞ւր է որդեակս՝ ո՞ր բարձունքներ , ո՞ր

դաշտիկ :

Նետեցիք դուք ըզքաղցր հատոր իմ սրտին,
Առէք, տարէք անոր ծոց մօրն ալ հոգին :

Հերիք բնութիւն համըր կենայ իմ ձայնիս,
Կ'նորոգեն խորին վէրքեր իմ սրտիս .

Հառաչանացս պատասխանէ լռութիւն . . .

Երկնից աստղեր ս'զ գգենուն մթութիւն :

Տէր իմ, գըթան արտօսալից իմ աչաց ,

Գըթան մօր մը արցունքներուն Տէր Աստուած .

Եթէ տըղաս ողջ է՝ շնորհէ թշուառիս ,

Եւ թէ մեռաւ . . . անոր կըցէ իմ հոգիս . . . » :

Կոյր գիշերներ հետըզհետէ կ'անցնէին ,

Թշուառ կ'նոջ սրտին վէրքեր կրկնէին .

Երբեմն անուրջք թեթեւ թեւօք՝ իր որդւոյն՝

Կ'բերէին պատկերն . . . ցնդէր այն խակոյն . . . :

Գառն արցունքներ ծովուն ջրոց կ'խառնէր ,

Մինչդեռ նաւ մը՝ անոր քովէն ս'զ կանցնէր .

Անշարժ դիտէր , այն ծովերուն դարդն եղած ,

Յանկարծ տեսաւ , շիրիմ մը մօտ եզերաց :

Ելաւ , դընաց՝ անոր վըրայ աղօթեց ,

Եւ ծաղիկներ անոր դամբանը սփռեց .

Իսկոյն կարդաց՝ անոր վրայի գրուածներն ,

Որոնք էին 'ի դութ շարժող սան խօսքեր :

« Հոս Միհրանայ հանգչին ոսկերք անցաւոր,
 Շիրմիս լըրայ թափէ խնդրեմ մէկ արաօսը . . .
 Հագիւ ծըլած, Երկինք քաղեց զայն իրեն,
 Եւ սիրելեացն ոգիք սըգով աշխարեն » :

Մինչ այս խօսքերըն նա կրկնէր ողբագին,
 Չը գիմացաւ այս երկրիս մէջ ալ հոգին .
 Գգուեց տապանն, համբոյրներով ողջունեց,
 Թշուառ հոգին Աստուծոյ ոտքն ընծայեց :



Հ Ա Ռ Ա Չ Ա Ն Ք Ի Ի Շ Ի Ր Ի Մ

Վ Ս Ե Մ Ա Շ Ո Ւ Ք Պ Օ Ղ Ո Ս Պ Է Յ

Ա Մ Ի Ր Ա Յ Ի Տ Մ Տ Ե Ա Ն



Ո՛հ, ինչ շուտ սահին, գընան զուարթ օրեր,
 Բաղդին լոյս աստղունք՝ ծածկեն մութ ամ-
 ւեր :

Եւ մրտենահիւս ճակատիդ պըսակ,
 Իսկոյն թառամի մըթին նոճեաց տակ :

Անմահ քո հոգին արաասուաց հովտէն,
 Երջանիկ դաւառն կը սլանայ անդէն . . .

Բայց քո վեհ անուն թողուս յիշատակ,
 Հայկազըն սրտից քաղցրիկ ըսիտիանք :

Դեռ չ'վայելած հայրենի ծաղկանց՝
Գէթ վարդ մը անդամ, սիրուն պարտիզաց...
Ո՛հ քեզ հետ մէկտեղ տանիս այս երկրէն,
Ջերմ հառաչանքներ մըտերմաց սրտէն:

Քուկին պերճ անունդ անմուտ աստղի նման,
Յաւերժ շողացի Երկնից 'ի խորան .
Ազգէ մինչեւ ազգ յանուն քո ՅԱՏԵԱՆ,
Սիրտք Հայոց անձկաւ արձագանք տի՛ տան:

Ոգի՛ Երկնածեմ արհամարհեցիր՝
Դու երկրիս փուշերն եւ քնաւ իսկ զերկիր .
Անշուշտ դիտէիր որ յանմահութեան՝
Մէն մի փուշք երկրիս վարդեր կը դառնան:

Թո՛ղ շիրմիդ վըրայ օրդիքն Հայոց դան,
Տեսնելով փոխեալն՝ դմահն անմահութեան .
Կաթիլ մը արցունք, թո՛ղ հոն տեղ ցօղնն,
Եւ քեզ 'ի յերկինս ծաղկունս ուղերձն:

Երկնից դռներէն թո՛ղ քուկին Ստուեր,
Դարձընէ առ մեզ ուրախ նայուած քներ,
Եւ արտասուաթուրմ ծաղիկս ընդունէ,
Զոր մտերիմ ձեռք մ' շիրմիդ վրայ փոռէ ...:



ԳԱՐՆԱՆ ԾԱՂԻԿ



Գեռարոյս ծաղիկ,
Բուրէ մեղմ հոտեր.
Երբ դարնան ցօղիկ,
Արբէ արցունքներդ:

Գո մեղմ նայուածքէն,
Գաշտեր կ'պճնին.
Եւ մեր աչքերէն,
Զուարթ արցունք սահին:

Գու ինձ օտար չ'ես,
Ծաղիկ երփնագոյն.
Երբ անոյշ բուրես,
Ի սիրտ նազելւոյն:

Հայաստան երկրին՝
Ծաղկներէն ևս դուն...
Գու պճնէ զկուսին,
Ճակատ տխրասուն:



ԹՈՉՆԻԿՆ



Երաժիշտ բնութեան ,
 Քո անոյշ երգէն .
 Հրճուին սիրտք համայն ,
 Մինչդեռ կ'լսեն :

Ճռուողք թռչնիկ ,
 Հայրենի տաղեր .
 Դաշնակ անուշիկ ,
 Որ կայ 'ի յերեր :

Արիւոյն ճաճանչներ ,
 Դեռ չը սփռուած .
 Հնչէ նըւագներն ,
 Հայկական փառաց :

Դաշտաց դեփիւռիկ ,
 Ո՛հ ցրուեն ճայներդ .
 Ի քօ դայլայլիկ ,
 Զուարթաման սրտեր :

Օ՛ն , թըռիթ թռչնիկ ,
 Մինչ խայտայ բնութիւն .
 Երգէ Հայրենիք ,
 Հայաստան սիրուն :

ԱՐՈՒՍԵԱԿ



Չքնաղ Արուսեակ ,
Երբ յերկինս ժպտիս .
Չարթնու իմ հողեակ ,
Երգել զհայրենիս :

Լուսահոս նայուածքդ ,
Հրաւէր ինձ կարգան .
Երթալ սխրազգեաց ,
Ի դրախտ սիրական :

Այգուն լոյս ծաղիկ ,
Գեղանշոյլ պատկերդ .
Երբ տեսնէ օրտիկս ,
Սկսէ նըւագներ :

Լապտեր երկնային ,
Սիրոյ գրկաց մէջ .
Քո ժըպիտդ անդին ,
Շողայ սիրատենչ :

Դըշխոյ գեղեցիկ ,
Մինչդեռ կարաւանք՝
Տեսնեն քո շողիկդ ,
Ո՛հ ինչպէս ցնծան :

Մինչ երկրի վերայ,
Հիւսեմ քեզ պըսակ .
Դու պայծառ շողան ,
Յեթեր կասուտակ :



ՄԱՐՏԻՐՈՍԻ ՄԸ
ՅԵՏԻՆ ՄՐՄՈՒՆՋՆԵՐԸ



Ա՛հ աչքերէս արցունք կաթին ,
Սրտիս խորէն հառանք բղխին . . .
Սէր պահանջէ բայց Հայաստան ,
Ո՛հ ես հանգչիմ 'ի գերեզման :

Ո՛վ հառանք իմ , երթ իմաց տուր ,
Հայաստանիս , երկրին թափուր .
Ըսէ անոր , մայր քո որդին ,
Ա յժըմ կ'երթայ ծոցն Անմահին :

Ո՛հ Հայրենիք . . . դաշտք Արտաղեան ,
Առէք արցունքս վերջին անգամ .
Եւ դուք լերինք՝ զայս ողբս յեափն ,
Հնչեցուցէք մինչ 'ի յերկին . . . :

ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅՈՒ ՄԸ

ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐԸ



Դշխոյ երկնից, ո՛վ դու լուսին,
Ոսկեժըպիտ փայլիս յերկին .
Քանի՛ քաղցր ես պանդուխտ սրտից,
Դ՛ու կ'ցրուես անոնց թախիժ :

Միայնութեանց դէտ, երբնայուած քդ,
Հեզ պանդխտիս շնորհես հիւղեակն .
Ո՛հ ի՛նչ անոյշ ցօղեր կաթենն,
Յայնժամ խեղճիս աչու ըներէն :

Քեզ կ'դիտենն ամեն գիշեր,
Մահկանացուին կարօտ աչեր .
Լուսնեակ՝ քուկին տրտում դէմքէն,
Միշտ ըսփոփանք խեղճիս բղխեն .

Ե՛կ այժմ այս իմ գիշեր վերջին,
Սփռել նըշոյլդ արծաթածին .
Հսկէ՛ ոգիս զըւարթ դէմքով,
Տես հուսկ ժամուս խեղճ մօքս գորով :

— Մի լար մայր իմ արտասուապին,
Ա՛ռ, հողերուդիս համբոյրս յետին :

Օրհնէ ինծի սուրբ աղօթքովդ . . .
Տուր կրկին ձեռսդ որդեգորով :

Մայր , թէ աչքէս սահին արցունք ,
Միայն մնացիր ահա իմ սուգ .
Ահա ստուերք մութ թեւերով ,
Ի հող տանին զիս պատելով :

Ահա հնչէ պատգամ Երկնից ,
Կ'հրաւիրէ շիրմաց մէջ զիս .
Ա՛լ չ'եմ կրնար խօսիլ քեզ հետ ,
Ո՛հ մայր զիս մի՛ թողուր գրկէդ . . . :



ՎԱՐԴԵՆԻՔ



Սիրուն վարդենիք ,
Ի՞նչ քաղցր են քո դէմք .
Մահացուաց ոգիք ,
Գերէ զուարթադէմ :

• Ո՛վ գարնան դատրիկ ,
Անոյշ են հոտերդ .
Ծաղկահոտ հողմիկ ,
Մինչ գգուէ թերթերդ :

Երբ բնութիւն ժպտի ,
Նախ դու կ'զարթնուս .
Եւ ինչպէս պճնի ,
Դըրախտ սրտերնուս :

Զըւարթ նայուած քէդ ,
Հաղար վարդք ծըլին .
Լուսազգեաց թերթէդ ,
Բիւր հոտեր բուրին :

Ծաղկանց թաղուհի ,
Մինչդեռ նոր բացուիս .
Թռչնիկն յանտառի ,
Երգէ նազելիս :

Նետեց քեզ Երկինք ,
Երկրիս ճամբուն վրան .
Սփոփանք քաղցրիկ ,
Դու սրտի մարդկան :

Բայց հազիւ ծըլած ,
Տարածամ թռամիս .
Եւ մենք չը վայլած ,
Գերեզման սուղիս . . . :





Հրեշտակդ Հայրենեաց ... դու որ կանգնեցիր՝
Յաղթական փառաց նըշան սիրալիր .

Որով թողուցիր մեզի յիշատակ ,
Ազգերու առջեւ պարծանք ու փառանք :

Ամեն մէկ կաթած արիւնիդ տեղեր ,
Քանի յաղթութեան ծաղիկք են բուսեր .

Որոնցմով միայն մենք վեհ ճակատով ,
Կարող ենք պարծիլ Հայութեան կնքով :

Երբ զազատութեան նեկտար մեզ տուիր ,
Անդէն վեհ ոգի 'ի մեզ դրօշմեցիր .

Անոր հրրեղէն լուսաւոր հետքէն ,
Քանի բռնաւորք այսօր կը հեծեն :

Աշխարհիս մրրիկք հողւոյդ են պատկեր ,
Արդ պճնեն ըզգլուխդ բոյլ 'ի բոյլ աստղեր .

Քու յաղթանակաւդ պանծայ Հայութիւն ...
Եւ երկրիս վըրայ ունի ազգութիւն :

Հայութիւնն այսօր թէպէտեւ թշուառ ,
Բայց իւր սրտին մէջ ունի մէկ պատուար՝

Այն է քո սիրուն պերճ յիշատակներ ,
Զոր ոչ հուր , ոչ սուր եղծել չեն կրցեր :

Այսքան տարիներ արիւն արցունքով
Թանայ իւր հողեր՝ բայց աղատ ողւով .
Տեսնելով յերկինս աստղիկ մը փայլուն ,
Որ օր մ'աի 'ըլլայ առաջնորդ Հայուն :

Աչաց արցունքն է իւր լոկ մըխիթարն ,
Սրտին հառանչքն է աղօթք փրկարար .
Զի Հայկ տուաւ մեզ նախ Աղատութիւն ,
Յաւիտեան վանեց սարուկ գերութիւն :

Նախ մեզ ինքն ուսոյց մեռնիլ Հայրենեաց ,
Պատերազմելով ընդդէմ թշնամեաց .

Որ Աղատութեան անհաշտ թշնամի ,
Կենային մեզ միշտ՝ մինչ Հայկեան մարտի :

Նախ ինքն սովրեցոյց կենալ ախոյեան ,
Երբ վատք՝ զիրաւունս ջնջել կամենան .
Նախ ինքն հըրաւէր մարդկութեան կարդաց ,
Չը հեծել լուծին տակ բռնաւորաց :

Իսկոյն տապալեց բռնաւորն նախկին ,
Պատերազմի դաշտք զարհուրած նային .
Լերինք իրարու տային արձագանք ,
Երբ լսուէր Բելայ վերջին հառաչանք :

Կուսանք եւ հարսունք , սղայք եւ ծերեր ,
Տեսնել զան Հայկայ զանմահ նախճիրներ :

Մինչ ապշեալ լռած, խնդութեան արցունք,
Հեղուն՝ զերդ գովեստ ամենայն աչկունք:

Յայնժամ յաղթական փառօք պըսակուած՝
Հայրն Ազատութեան կանգնեցաւ լռած .
Եւ դողդոջ ասաղունք Երկնից կամարէն,
Իւր ճակտին վըրայ լոյսեր կը սփռեն:

Ազատութիւն շուրջ համագոյք երգեցին,
Ազատութիւն ծովք 'ւ լերինք կրկնեցին .
Ի նըւագ սիրոյ լուծան ամեն սիրտք,
Եւ լարն երգներանդ պարզեցին Երկինք:



ԵՐԳ

ՏԱՐԵԴԱՐՁԻ

ՎԱՐԳԱՆԱՅ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ



Ո՛հ, հայրենի շիրմաց մէջէն,
Ի՞նչ վեհ ճակատ կ'վերցընես .
Վարդանն . ինչպէս քեզ կ'ողջունեն,
Ամեն Հայոց սիրտք սիրակէզ . . . :

Ինկար յաղթող, մեռար յերկրի,
Բայց հողուոց մէջ սէրըդ կ'ապրի:

Հրազդայր արիւնդ՝ Հայոց սրտին ,
Ո՛հ , ի՛նչ քաղցրիկ օրհնենք եղաւ .
Քու սուրբ քրտամբդ՝ Արտազ դաշտին ,
Ի՛նչ գեղեցիկ վարդեր բուսաւ :

Չ'թռամեցաւ ճակտիդ պըսակ ,
Անմահ մընաց քո յիշատակ :

Երկնից աստեղք արցունք ցօղեն ,
Այն քու թափած արեանց վըրայ՝
Ո՛ւր Հայ զինուորք հանգիստ ննջեն ,
Անդ քու ոգիդ լուսով խայտայ :

Հոն կը ժպտի սիրոյ հրեշտակ ,
Ո՛ւր կանգնեցիր Հայ յազթանակ :

Ո՛հ , իմ երկիր , ո՛ւր կը հանդէլին ,
Մեր դիւցազանց սուրբ աճիւններ .
Որոց արիւնք ոռոգեցին ,
Հայոց դրախտին մորչ ծաղիկներ :

Այն սուրբ շիրիմք մէյմ' համբուրեմ ,
Եւ իմ աչկունքս , ո՛հ անդ դոցեմ :





Մասեանց բամբուռնք, օ՛ն երգեցէք քաղց-
 րանուազ,
 Ձեզ Հայրենեաց աճիւնք կարգան յաղթանակ
 Եղեմասուն դստերք Հայոց փութացէք,
 Աստեղահիւս փառաց պըսակս հիւսեցէք:

Ահա Հայկազնեան շիրմաց վըրայէն,
 Դարք պատկառելով կ'հոլաթեւեն.
 Հայ լերանց վըրայ ստուերք դիւցադանց,
 Մեզ հրաւէր կարգան յասպարէզ փառաց:

Հոս մարդկութիւնն վերածնանի,
 Մեր ճակտին վրայ յոյսն կը ժպտի.
 Նախնի փառքերն ողի կ'առնուն,
 Խայտայ յերկինս աստղիկ Հայուն:

Հայաստան երկիր,
 Որրան վշտակիր.
 Սիռեն ծաղիկներ,
 Քու որք զաւկըներ:
 Քեզ հիւսեն պըսակ,
 Նորոգեն քո փառք.
 Եւ վէրքերդ բուժեն,
 Քաղցր 'ի փոխարէն:

Նորափետուր իմ քրնարիս ձայն քնքոյշ ,
Թող սաւառնի ընդ ծաղկափթիթ դաշտ
մեղոյշ :

Եւ հոն հասնի , ուր Հայրենեացս աւերքներ ,
Ծածկեն իմ հարցըս դիւցազանց ածիւններ :

Օ՛ն մեր շրթունքներ զըւարթ ձայներով ,
Հայրենի նըւադ քաղցրիկ երգելով .

Պճնենք ըզճակատ վեհ Հայաստանին ,
Նորէն թող ծըլի յաղթական դափնին :

Ուրախ ժպտի արդ ապագան ,
Խոստանայ փառք յաւերժական .
Անցան , դնացին ո՛հ մութ օրեր ,
Եւ նորալոյս շողան աստղեր :

Փառաց որորան ,

Ո՛վ մայր Հայաստան .

Ժպտի քեզ Երկինք ,

Զարթնուն փառք քո հինք :

Զըւարթ արցունքներ ,

Յօղեն թող աչերդ .

Տո՛ւր ողբոցդ վախճան ,

Կան երգս յաղթութեան . . . :



ԱՂՔԱՏԻՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

ԵՒ ԻՒՐ ՀԱՌԱՉԱՆՔԸ



Գարնան անոյշ մեղմ զեփիւռներ }
Տխուր սրտիկս չ'են ըսփոփեր .

Եւ ոչ թռչնոց մեղմ դայլայլիկք ,
Կրնան ցրուել իմ հոգւոյս վիշտք :

Երջանկութեան սիրուն նեկտարն ,
Կոյր բաղդն աւանդ ինծի չը տար .

Փափկիկ կուսին զըւարթ աչեր ,
Արցունք երբէք ինձ չ'են ձօներ :

Ո՛չ աստեղաց ինձ պարք ժպտին ,
Եւ ո՛չ մեղոյշ ցօղք լուսնեկին .

Չ'ըլլան սրտիս մէկ ըսփոփանք ,
Երբ կը հանեմ խոր հառաչանք :

Խաղաղ հողմոց անոյշ թեւեր ,
Յողնած ճակատըս չ'են գգուեր .

Եւ ոչ ցօղիկքն սրբեն աչքէս ,
Ձեռք մըտերմի կարօտակէղ :

Ո՛չ դարնայնի երաժիշտներ ,
Սփոփեն սրտիս այս թախիժներ .

Եւ բիւր ծաղկանց հոտերն անոյշ ,
Դեռ չի կրցան ոգւոյս տալ ուժ :

Ոչ պատանւոյն սիրուն ողբերն ,
Մեղմացընել հոգւոյս վէրքեր .
Հառաչ մ'են լոկ կեանքս համօրէն ,
Իմ գլխուս բարձն է շիրմաց վէմ . . . :



ՔԱԶՈՒԹԻՒՆ ՍՄԲՍՏԱՅ

ԵՒ

ՊՍԱԿՈՒՄՆ ՄԵՐՈՒԺԱՆԱՅ



Հայոց աշխարհին չքնաղ դու պարծանք ,
Հայկեան դարերու յաւերժական փառք .
Արդ յիշատակաւդ ոգիք Հայկազանց՝
Ժպտին եւ ածիւնք ոսկերք նախահարց ,
Թէ դու չ'ըլլայիր , դիւցնզն աննըման ,
Բքնաւ ըսփոփանք չ'ունէր Հայաստան .
Թէ քեզի Երկի՛նք թիկունք չ'ըլլային ,
Հայրենիք մատնէր գերի օտարին :

Դու որ Աստուծոյ սիրովը վառուած ,
Ազգասիրութեան ոգւով զարդարուած :

Փութացիք շամիրել Հայոց թշնամին ,
Նըշան քաջութեանդ , եւ ան վատ Պարսկին :
Անգութ Մէրութան գողցեսնոր կայէն ,
Վըրէժ կ'ընչէր թունալից սրտէն .
Կ'ուզէր նըւաճել զՀայոց աշխարհիկ ,
Գահ ըլլան անոր աւերք Հայրենիք :
Բայց դու ուզեցիր վեհանձըն սրտով ,
Փշրել զսէզ ճակատն շամիրէ պըտակով .
« Ահա զքեզ պսակեմ » երբոր կ'ըսէիր ,
Կարծես թէ կայծակք թափէին յերկիր :
Այո՛ շամիրեցիք ըզվատն այս Վասակ ,
Եւ քու յաղթութեանդ անն յիշատակ .
Չըմոռնար երբէք դարուս վեհ Ոգին ,
Միշտ յիշեցընէ զքաջութիւն քոյին :
Լռութիւնն եւ եթ սոսկ համատարած ,
Լերինք ու սարերն , դաշտք էին պատած .
Եւ անն Երկինք յերկիր ժպտէին ,
« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՍԱԿՆ » անն կ'ըսէին :
Ո՛հ , ինչ քաղցր է ինձ Մասեաց ոտն նստած ,
Երգել քո սիրուն տաղեր Հայրենեաց .
Եւ իմ երգերով վեհն Արարատեան՝
Դաշտերն եւ լերինք կրկնեն յաւիտեան :



Ոսկեթէլ ամպինկ ,
 Երբ դու յառաւօտ .
 Ճախրես լոկ Երկինք ,
 Նայիմ քեզ կարօտ :

Ո՛հ , ի՛նչ տըխուր եմ ,
 Երբ մենիկ նստած .
 Ամպինկ քեզ դիտեմ .
 Զերդ քօղ տրամութեանց :

Հանգիր մի վայրիկ ,
 Ոգի երկնածեմ .
 Տո՛ւր իմ բարեւիկ ,
 Եղբարց տարադէմ :

Երբ կուսին աչեր ,
 Ո՛հ քեզի ժպտին .
 Տո՛ւր նորա զիմ սէր ,
 Եւ զողջնյնս վերջին . . . :





Հայ օրիորդ մ'եմ ես թափառական,
 Հայրենի երկիրս ձգած երեսի վրան.
 Ինկած եմ թշուառ օտար աստեղց տակ,
 Սը գթար ինձ գէթ ո՛հ սիրոյ հրեշտակ:

Եւ աչքէս վազած աղի արցունքներ,
 Միշտ կ'ուռեցընեն Արտազեան գետեր.
 Երբոր լըռութեամբ գիշերըն կուգայ,
 Ո՛հ սրտիս մէջ բիւր ցաւեր կ'աւելնայ:

Պանդուխտ կ'ըջիմ օտար եզերքներ,
 Միշտ սրտէս կ'ելլեն տխուր հառաչներ.
 Երբ թողմին ճակտիս երփնագոյն ծաղկունք,
 Ո՛հ չեն ճըռուողեր այն նորեկ ծիծուռնք:

Լեռ, ձոր թափառիմ գլխիկըս ծռած,
 Հայրենիք յիշեմ ձայնիկըս մարած.
 Կ'ուզեմ դարձ առնել սիրուն յերկիրն այն,
 Յորում ծըլեցան ծաղկունք մանկութեան:

Աստուած իմ, այսպէս դու ինձ վճռեցիր,
 Կնդութ բաղդին ձեռքն տալ ճակատագիրս.
 Ի՛նչ մեռած էի, ինձ երանի էր,
 Ինչ թէ կենդանի սիրտս այսպէս խոցուէր...



Հայաստանի աւետարներ ,
 Ո՛վ դու կըռուենկ , ձայնդ անուշիկ ,
 Արդ եկեր ես օտար տեղեր ,
 Ի՞նչ լուր բերիր ինձ պանդխտիկ :

Ո՛հ , Հայրենեաց կըռուենկ սիրուն ,
 Ուրախ լուրեր տար Հայերուն :

Ըսէ կըռուենկ , Հայ դաւակաց ,
 Թէ ձեր եղբայրն օտար վայրեր՝
 Բնակի , բայց սիրտն բնաւ չէ մոռցած ,
 Միշտ Հայրենեաց կարօտ քաշէր :

Ո՛հ , Հայրենեաց կըռուենկ սիրուն ,
 Տար սրտիս հետ եւ զիմ ողջնն :

Մեր այն կանաչ մարդագետինք ,
 Ո՛ւր կաքաւեն Հայ օրորդներ .
 Արդեօք քաղէ իմ անուշիկ՝
 Սրտիս հատորն՝ սիրուն վարդեր :

Ո՛հ , Հայրենեաց կըռուենկ սիրուն ,
 Տար անկեղծ սէրս անդ Հայունայն ,

Մայրս կ'խորհիմ գիշերն ամեն ,
 Երբ աստեղց պարք յերկինս փայլին .

Դառն արցունքներ աչքէս վազեն ,
Երբ կ'յիշեմ իմ Հայրենին :

Ո՛հ , Հայրենեաց կըռունկ սիրուն ,
Տար արցունքներն իմ աչքերուն :

Ա՛հ , աւերակ է Հայաստան ,
Կոյս Ոգին անդ հակէ մենիկ .

Մեր դիւցազանց սուրբ գերեզմանն ,
Միշտ կ'սփոփեն թշուառ որդիք . . . :

Ո՛հ , Հայրենեաց կըռունկ սիրուն ,
Տար հառաչներս մութ շիրմերուն . . . :



ՇՈՒՇԱՆ



Անմեղ Շուշանիկ ,
Յայգուն ծաւալես .
Բուրմունս անուշիկ ,
Մեր սիրեք կ'թիւթես :

Զիւնաթոյր թերթերդ ,
Թոռմին մի առ մի .
Քեզմէ զատուողին ,
Կայ սփոփանք յերկրի :

ԱՐՇԱԼՈՅՍ

Երկնային կուսան,
Մինչ խայտաս յեթեր .
Վարդեր սիրական,
Սփռենք քո քայլեր :

Ոսկերիք Այգուն,
Քու նայուած քներէդ .
Ժպտի բընութիւն,
Ոգւով հեղաւէտ :

Չքնաղ Արշալոյս,
Դու շողերդ սփռէ .
Երբ մահացուաց յոյսն,
Առ քեզ կ'ակնարկէ :

Քեզ վերընծայեն,
Համայն բընութիւն .
Իրենց սրտերէն,
Նախերգանք սիրուն :

Քեզ ծաղկունք, սոխակ,
Լըջունեն սիրով .
Քեզ սիւք եւ վրտակ,
Դգուեն 'ի գորով :



Ո՛վ 'ի խռան քաջաց Արամ քաջագոյն,
 Դեռ աշխարհիս չէր ծանօթ Հայութիւնն .
 Եւար, գացիր դաշտ, արիւն, պատերանգմ,
 Եւ զՀայոց անուն ցուցեր յաղթական .
 Գունդագունդ Հայոց որդիքն հետ առիր
 Եւ 'ի Մարաց մինչ Մաժակ վազեցիր .
 Տարածել Հայոց լեզուն Աստուածեան,
 Եւ բըռնաւ որաց փշրել կուռ շղթան :
 Օտար մարդիկներ ապշած կ'ըսէին,
 Թէ երէկ դեռ Հայք գերի հեծէին .
 Եւ ահա այսօր պանծայ յաղթական,
 Ամեն տեղ ծրփայ դրբօշ Հայութեան :
 Ծիածան Մասեաց զըւարթ ծածանէր,
 Ազատութիւն Հայ հըրեշտակն երգէր .
 Անդ մատունք կուսին հիւսէին պըսակ,
 Ի ճակատ, քեր գոհ պանծայ յաղթանակ :
 Յաղթութեան դրօշով դարձան զուարթագին
 Հայուհեաց ճակատս կ'համբուրէին .
 Այնպէս ժպտեցաւ քաղցրիկ Հայաստան,
 Ինչպէս բընութիւն 'ի դառնալ դարնան . . .

Երբ կ'ըրջիս դաշտ եւ լեռներ,
 Ո՛հ, կոյս սիրուն անոյշ հողմիկն .
 Իւր ծաղկահոտ թեւօք՝ մազերդ,
 Միշտ գգուելով ժպտի հեղիկ :

Յայնժամ նոր ուժ կուտաս սրտիս,
 Երբ տեսնեմ քեզ նվ նազելիս :

Ո՛վ իմ հողեակ, երբ այն թռչնիկն,
 Գայ, հանդչի քու ուսիդ վերայ .
 Հոն երգելով իւր դայլայլիկ,
 Եւ համբոյրներ քեզի կուտայ

Յայնժամ հողիս սիրովդ վառուած,
 Աչքերս ժպտին քեզ ըզմայլած :

Հողւոյս հատոր ամեն գիշեր,
 Լուսնին դէմը արխուր նստած .
 Քեզի համար թափեմ ցօղեր,
 Բայց դու հանդիստ նհ ես ննջած :

Անգամ մը դէթ ժպտէ ինձ կոյս,
 Մութ հողւոյս մէջ թնդ ծաղի լոյս :



Ո՛հ ի՛նչ անուշ է,
Համբոյրն առաջին .

Երբ զիրար զրկեն ,
Կոյս եւ պատանին :

Ի՛նչ քաղցր այն ատենն ,
Սիրուն պատանույն .

Որ գգուէ մազերն ,
Իրեն սիրուհույն :

Կըկոցեալ աչքէն
Արցունք կը սահին .

Եւ սիրոյ երգմունք ,
Սրտէն կը բղխին :

Երգմունքն որ մընայ ,
Հաստատ անսասան .

Նոյն իսկ նոճեաց տակ ,
Ի լռոյն դամբան :





Արտիս աստղիկն իմ Հայկուհի,
 Փառք եւ պըսակ Հայաստանի .
 Ի՛նչ քաղցր են քո վառվառ այտեր,
 Երբ ամօթլեամ ծըլին վարդեր :

Քո համբոյրէն ի՛նչ կայ անոյշ,
 Ե՛կ, իմ գրկացըս մէջ քնքոյշ :

Ո՛հ, կոյս սիրուն դողայ սրտիկս,
 Երբ սրտիդ հետ կըսպած մեղմիկ .
 Ոսկի մազերդ թո՛ղ որ գգուեմ,
 Երջանկութիւնս յայնժամ տեսնեմ . . . :

Քո մազերէդ ի՛նչ կայ փաղփուն,
 Ե՛կ, որ գգուեմ մազերդ փայլուն :

Բուրեն շրթունքդ անոյշ հոտեր,
 Երբ տաս ինձի ջերմ համբոյրներ .
 Եւ ձիւնաթոյր լանջքդ ուռուցիկ,
 Բղխեն հառանջք սիրատենչիկ :

Քո ծոցէդ զատ ի՛նչ կայ սիրտիանք,
 Ե՛կ, տամ սրտիդ իմ պարզ հողեակ :

Երբ դէմքիդ վրայ ժպտաքդ փայլին,
 Կարծես հրեշտակք ինձ հետ խօսին .

Եւ երբ ըսիր ինձ զքեզ սիրեմ ,
Բնութիւնն առանց քեզ մութ սեպեմ :
Քո համբոյրէն ինչ կայ անգին ,
Թո՛ղ մեր հոգիք իրար խառնին . . . :

ՀԱՅ ԱՂՋԻԿՆԵՐ

Հայ պարտիզաց քնքոյշ վարդեր ,
Յաղթանակաց պերճ պըսակներ .
Ընդունեցէ՛ք այս հառաչանք ,
Իբրեւ սիրոյ նըւէր աղկաղկ :

Ձեզի համար գիշերն ամեն ,
Աչքէս արցունքն անպակաս են .
Ձեր դէմքերէն , չքնաղ կուսանք ,
Ծըլին քաղցրիկ փունջ մանուշակք :

Կիսանուաղ ձայնս ձեզ կը կանչէ ,
Երկչոտ նայուածք երբ ձեզ տիրէ .
Ուխտէր բղխին սրտիս խորէն ,
Իբր անոյշ հոտք ծաղկանց թերթէն :

Ո՛վ դու հրեշտակ լուսածաղիկ,
 Յողաթուրմ աչքս դիտեն Ստողիկդ
 Երբ դարնայնի վարդ փաղաքուչ,
 Սփռէ ըզհօտ 'ի սիրտս անուչ:

Քեւ մոռանամ ամեն վշտերս,
 Քեւ քսփոխի սիրտս կարեւէր .
 Քու շքթունքէդ մեղր ինձ կաթեն,
 Փափուկ մատունքդ սլքսակ հիւսեն:

Քու նայուածքէդ խայտայ սրտիկս
 Եւ տայ սիրոյ քեզ համբուրիկ .
 Խորհրդաւոր քուկին դէմքէն,
 Հոգւոյս փոփանք միշտ կ'ըղխեն:

Ա՛յ իմ լուսնակ սրտիս հեզիկ,
 Թափէ հոգւոյդ հոյլ վարդենիք .
 Դու զիս պճնէ դափնիներով,
 Երբ տեսնաս դարձս յաղթանակով:

ՃՌ ԼՈՒՍԻՆ



Գեղաժպիտ լուսին ,
Սրտիս հառաչներն .
Առ քեզ երբ հասնին ,
Կրկնէ քո լոյսեր :

Աննրման լուսին ,
Դ՛ու արխուր ժամուս .
Ըտիտիէ հողին ,
Ազնիւ սիրուհեոյս :

Կիսանուաղ ձայնիկս ,
Մինչդեռ կ'լսես .
Երկընքէն ծաղիկ ,
Ո՛հ գիրկըս թափես :

Լապաեր երկնային ,
Մինչ փայլիս հեզիկ .
Ո՛հ իմ սիրուհին ,
Ննջէ անուշիկ . . . :





Երբեմն Հայոց աստղիկն պայծառ,
 Փայլէր զըւարթ յերկնից կամար.
 Բազուկն երբեմն Հայոց զօրեղ,
 Ազատութիւն տար ամեն տեղ:

Բոլոր աշխարհ կ'գողային,
 Երբ Հայք միմեանց կ'գոչէին՝
 «Քաջաց որդիք՝ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ,
 «Քաջաց ծընունդք ՚ի ՅԱՂԹՈՒԹԻՒՆ»:

Բայց արդ թշուառ, թափառական,
 Կ'անցնեն օրեր պանդխտութեան.
 Մին քարին վրայ, միւսն ՚ի հողին,
 Հանգչին լալով արտասուագին:

Հայրենազուրկ թշուառ Հայեր,
 Ոչ, մարած չէ բնաւ աստղըն ձեր.
 Չեզ հայրենի շիրմաց վըրայ,
 Կարօտակէզ մայր ձեր մընայ:



ՎԵՐՁԻՆ ՀԱՌԱՉԱՆՔ ՊԱՆԴԻՍՏԻՆ



Ինչպէս թռչնիկն որ թռւիոց մէջ ,
Կ'ողբայ տրտում ու սիրատենչ .
Ի նոյն եռանդ ես ալ կ'երգեմ ,
Քաղցր Հայրենիս երբոր յիշեմ :

Ո՛հ , տայի՛ն ինձ անոր թեւիկ ,
Թռչիլ յերկիրն իմ չնաշխարհիկ .
Ո՛ւր պրտակներ անմահութեան ,
Հիւսեն կուսանք Եղեմական :

Ո՛ւր բանաստեղծք վեհ Բիւրակնեան ,
Ոսկի քնարօք գալուստ գարնան՝
Ողջունէին սիրով վառուած ,
Մեր մօր գըլուխն ծաղկօք պճնած :

Առէք , ինձմէ տխուրս այս քնար ,
Սիրտն իմ նուաղի . . . 'ի հող օտար . . .
Ո՛հ , չեմ կրնար ալ գեղգեղել ,
Քաղցր Հայրենեաց եմ կարօտցեր :

Թո՛ղ աւերակք եւ սեւ հողեր ,
Եւ հայրենի լերինք դաշտեր .
Մաշած շնչիս հուսկ հառաչանք ,
Հայ սրտերու տան արձագանք :

ԱՌ ՕՐԻՈՐԴՆ
ԷՊՐՈՒՍ ԿԷՑՄՐԻԻՔ ՃԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ԴԵՐԱՍԱՆՈՒՂԻ



Չըւարթաղէմ երբ դաս հանդէս,
՛զմայլմամբ աչք մեր քեզ ժպտին.
Եւ արամագին երբ արտասուես,
՛րտից խորեր քեզմով վառին:

Սիրոյ գրկաց մէջ երբ շրջիս,
Պըսակ հիւսեն քեզ զըւարթունք.
Ի գութ շարժես դու բիւր հողիս,
Յօղեն արտօսը ամեն աչկունք:

Ո՛վ փափկասիրտ դու Հայուհի,
Երբ կ'սփռես հողւոյդ վարդերն.
Հայոց բեմին վըրայ լսուի,
Կեցցէներուդ արձագանքներն:

1864





